ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.01.2014թ.
211-ի 9

ՀՀ կրթության եւ գիտության նախարար
պարոն Արմեն Աշոտյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աշոտյան,

Մեզ է դիմել ԵՊՀ ռոմանոգերմանական ֆակուլտետի անգլիական բանասիրության բաժնի (4-րդ խումբ) 2-րդ կուրսի ուսանող Մարիաննա Երջանիկի Ստեփանյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկություն ստանալու հարցում: Մարիաննա Ստեփանյանը սովորում է առկա համակարգում վճարովի հիմունքներով եւ նրա վարձավճարը կազմում է 550.000 ՀՀ դրամ, քանի որ նա տեղափոխվել է ուսուցման առկա համակարգ հեռակա ուսուցման համակարգից: Մարիաննա Ստեփանյանը ընտանիքի 6-րդ զավակն է, ծնողները թոշակառու են, հայրը 75 տարեկան է, մայրը՝ 63: Մարիաննա Ստեփանյանը դժվարություններ ունի ուսման վարձը վճարելու հետ կապված:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները,

1. Կա՞ն արդյոք Մարիաննա Ստեփանյանի ուսման վարձը զեղչելու հնարավորություններ,
2. Եթե այո, ապա ի՞նչ ընթացակարգով եւ ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել:

Միաժամանակ, խնդրում ենք անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Մարիաննա Ստեփանյանի ուսման վարձավճարը զեղչելու համար:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան